Նորին Ա. Եհատիաւութիւն ընդունելով սոյն հեռագիրն բարեհաճեց յայտնել իւր շնորհակալութիւնն յանուն Ամենապատիւ Տեղակալ Տ. Մկրտիչ Սրբազան Արքեպիսկոպոսի։

ՏԵՂԱԿԱԼԻ ԱՏԵՆԱՊԵՏԻ ՍԻՆՕԴԻ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ

ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ.

Նուիրեմ Ձեզ և բոլոր Անդամոց Սինոդի, նոյնպէս և Միաբանութեան Էջմիածնի զիմն սրտագին շնորհակալութիւն և օրհնեմ զամենեսեան։ Զբոլանդակեալ ի հեռագրի արտայայտութիւնս ջերմեռանդն զգացմանց, խորին յարգանաց և որդիական հաւատարմութեան համարիմ ես ճշմարիտ առհաւատչեայ ապագայ ծաղկման Մայր Աթոռոյ և բարեկեցութեան Անդամոց Միաբանութեան Նորին, զորոց զջերմագին աղօթս լուիցէ Ամենակարողն Աստուած և օգնեսցէ ինձ արդարացուցանել զյոյս և զցանկութիւն ամենեցուն յոգւոս սիրելի Ազգիս և Սրբոյ Եկեղեցւոյ մերոյ։

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ՄԱԿԱՐ.

Կիւրակէ ամսոյս 25ին Դեր. Տ. Երեմիա եպիսկոպոս անդամ Սինոդի և աւագ լուսարար Մայր տաճարի պատարագեց Աւագ սեղանոյ վերայ, և յիշատակութեան պահուն մօտեցաւ սեղանի վերայ դրուած Հայրապետական սգապատ գահին, երեսը դէպ ի ժողովուրդ դարձնելով համառօտ և ազդու ատենաբանութեամբ բացատրեց Հայաստանեայցս միակ պարծանք մնացած Հայրապետական Գահի և Գաւազանի նշանակութիւնն, երկու և կէս տարի թափուր մնալով ազգին ու եկեղեցւոյն ինչպէս

մեծութիւնն, անցեալ տարւոյ անյաջող ընտրութիւնն, աւետեց այս տարւոյ Ապրելի ընտրութեան ի հետևանս Տ. Տ. Մակարայ հաստատութիւնն ամենայն ռուսաց ամենողորմած ԱԼԷՔՍԱՆԴՐ Գ. Կայսեր բարեհաճութեամբ։ Յաւարտ ատենաբանութեան՝ լուսարարները վերցրին սգապատ Գահն, և Սրբազան Պատարագիչը՝ դարձաւ դէպ ի սեղանը և շարունակելով Ս. Պատարագը նորահաստատ Հայրապետի Ընտրն «Ե-ա ա-ա-էլ» աղօթքի մէջ. յիշելիս որոտացին զանգակները և ձայնակից եղան լուութեամբ հանդիսականք՝ բարեմաղթելով առ պատարագեալն Յիսուս իւր Իջման Ս. Տեղին միշտ անսասան պահել յաւիտեանս ժամանակաց բարեխօսութեամբ կենդանի նահատակին և Լուսաւորչին Հայաստանեայց Սրբոյն Գրիգորի՝ տալով նորընտիր Հայրապետին անդորր կեանք և կարողութիւն պահպանել ինքեան աւանդուած Իշխանութեան Գահն ու Գաւազանը, որ միակ պարծանք և ապաւէն մնացած է յոլորտս տիեզերաց ցրուեալ Հայկազանց։

Զկնի Ս. Պատարագին կատարեցաւ մաղթանք վասն երկարութեան կենաց ամենողորմած Կայսեր ամենայն ռուսաց ԱԼԷՔՍԱՆԴՐ Գ.-ի և կայսերական տան ի շնորհակալութիւն այն ամեն երախտեաց, որով հովանաւորում է Մայր Աթոռոյս և նորան ապաւինածներին կէս դարուց ի վեր, և շարունակում է նոյնն։

Ճաշին միաբանութեան սեղանատունն լոսա պատշաճին զարդարուած ծաղկօք և ուռենոյ թարմ ոստերով՝ նոյնպէս և Հայրապետական թատն՝ ծաղկեայ շքեանակով սեղանատան փոքրիկ կամուղիկէի ճակատ դրուած՝ քաղցր տպաւորութիւն էին գործում սեղանակցաց սրտի և դիմաց վերայ. ճաշի ժամանակ երեք Սրբազան Հայք հետ զՀեռէ խօսեցան Հոգեւանդ և Համառօտ առենաբանութիւններ, նախ՝ Գեր. Տ. Սերովբէ եպիսկոպոս Համառօտ թուելով նորահաստատ Հայրապետի բարեմասնութիւններն՝ առաջարկեց կենաց բաժակ, որ ընդունուեցաւ ցնծութեան ազատակներով և կեցցէներով և ի վերջոյ «Էջմիածին ի Հօրէ» շարականով, ապա Գեր. Տ. Սերովբէ եպիսկոպոս Սմբատեան անդամ Սինոդի Համառօտ ծանուցմամբ յոտին կանգնած կարդաց Ա. ԵՀ. Հայրապետի վերև յիշուած շնորհակալութեան հեռագիրն, առաջարկեց բաժակ վասն հաստատութեան Մայր Աթոռոյ և կենաց Միաբանութեան. դադարկեցան բաժակներ բարձրապոչ կեցցէներով. ապա Ամեն. Տ. Մկրտիչ Արքեպիսկոպոս Տեղակալ երախտապիտութիւն յայտնելով նորին Կայսերական Մեծութեան ԱՂԷՔՍԱՆԴՐ Գ. Կայսեր ամենայն ռուսաց, որ բարեհաճեց ընդունել Ապրելեան ընտրութիւնն և հաստատել զՏ. Տ. Մակար ի կաթուղիկոսութիւն ամենայն Հայոց և ի պատրիարքութիւն Մայր Աթոռոյս՝ առաջարկեց կե-

նաց բաժակ, որ նոյնպէս ընդունուեցաւ կեցցէներով։

Երեկոյեան կատարեցաւ Ճրագալոյց. զանգակատան ճակատը փայլում էր լուսեղէն տառերով սոյն վերտառութիւնն «Կեցցէ կաթուղիկոս ամենայն Հայոց Տ. Տ. Մակար». մինչ ժամը 10 բաւականաչափ բազմութիւն զբօսնում էին Մայր վանուցս գաւթում։

Սինոդի կարգադրութեամբ հրաւիրակ նշանակեցան Գեր. Գրիգոր Արքեպիսկոպոս Սազինեան կառավարիչ թեմին Ղարաբաղու և Գեր. Յովակիմ եպիսկոպոս Տ. Գրիգորեան անդամ Սինոդի, գնալ Քիշնև առ Ա. Եկ. Հայրապետն ապրիս և հրաւիրել ի Սուրբ Էջմիածին ի Գահ Հայրապետական, որք ճանապարհ ելան ամսոյս 28-ին։

Նորին Ա. Եհատիառութեան կենսագրութեան համառօտ ցանկն հրատարակելով Արարատի ներկայ համարի առաջին թերթում. ընթերցողները կրտեսնեն որ Նորին Սրբութեան հաստն և փորձառու հասակն, խոհական հանճարն, ծանրաբարոյ և վեհանձն բնաւորութիւնն և եկեղեցական կարգաց հմտութիւնն մեծ գրաւական է թէ ապագի յոյսը պիտի պահուի, և թէ Նորին Սրբութեան Անունը ի շարս ընտրելագոյն հայրապետաց պիտի յիշատակուի հայ եկեղեցական պատմութեան մէջ։